ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 87- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵԼՔԻ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրեր անձանց մուտքի և ելքի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

26.11.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
2025 թվականի նոյեմբերի 26 -ի
N 87 - Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵԼՔԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրեր (այսուհետ՝ ՁՊՎ) անձանց մուտքի և ելքի կարգը:

2. ՁՊՎ այցելությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կարող են ժամանակավորապես սահմանափակվել կամ արգելվել:

3. ՁՊՎ այցելուների կողմից ՁՊՎ տարածքում լուսանկարահանումներ և տեսաձայնագրություններ իրականացնելն արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

4. ՁՊՎ այցելուների մուտքը զենքով արգելվում է, բացառությամբ ձերբակալված կամ կալանավորված անձի ուղեկցումն իրականացնող հանրային ծառայողների:

2. ՄՈՒՏՔՆ ՈՒ ԵԼՔԸ ՁՊՎ

5. Մինչև անձի մուտքը ՁՊՎ թույլատրելը ՁՊՎ վարչական տարածքի մուտքում տեղակայված հսկիչ անցագրային կետում կամ ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մասում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողը բանավոր հնարավորինս սեղմ ժամկետում այդ անձի մուտքը համաձայնեցնում է ՁՊՎ իրավասու պաշտոնատար անձի հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց, տվյալ ՁՊՎ-ի ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող ու քաղաքացիական աշխատանք կատարող անձանց:

6" ՁՊՎ մուտքի և ելքի իրավունքը չի ենթադրում ՁՊՎ-ում պահվող անձանց հետ տեսակցություն ունենալու իրավունք: ՁՊՎ-ում պահվող անձանց հետ տեսակցությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7" Յուրաքանչյուր այցելու ՁՊՎ մուտք գործելու նպատակով ՁՊՎ վարչական տարածքի մուտքում կամ բաժնի հերթապահ մասում ներկայացնում է իր ծառայողական վկայականը կամ անձը հաստատող փաստաթուղթը:

8" Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձինք ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողին են ներկայացնում ծառայողական վկայականը կամ կարգավիճակը և անձը հաստատող փաստաթուղթը: Նշված անձանց մուտքն անխոչընդոտ թույլատրվում է վերջիններիս կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ներկայացնելուց անմիջապես հետո՝ առանց ՁՊՎ իրավասու պաշտոնատար անձի հետ համաձայնեցման:

9" ՁՊՎ վարչական տարածքի մուտքում տեղակայված հսկիչ անցագրային կետում կամ ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մասում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողը, համապատասխան համաձայնությունը ստանալուց հետո, այցելուների գրանցման մատյանում (Ձև) գրանցում է այցելուի անունը, ազգանունը, ՁՊՎ մուտք գործելու ամսաթիվը, վերջինիս պաշտոնը կամ պահվող անձի հետ կապը, այցելուի ծառայողական վկայականի կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ նշելով ՁՊՎ մուտք գործելու ժամը և րոպեն, բացառությամբ տվյալ ՁՊՎ-ի ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող ու քաղաքացիական աշխատանք կատարող անձանց:

10.Եթե այցելուի մոտ առկա է զենք, ապա հերթապահ մասի հերթափոխի կողմից այն ընդունվում է պահպանության և վերադարձվում է ՁՊՎ-ից դուրս գալիս, բացառությամբ ձերբակալված կամ կալանավորված անձի ուղեկցում իրականացնող հանրային ծառայողների:

11.Այցելուին ՁՊՎ-ում գտնվելու ողջ ժամանակահատվածի ընթացքում կրելու նպատակով տրվում է անցաթուղթ, որի վրա գրված է «ԱՅՑԵԼՈՒ» բառը:

12. ՁՊՎ այցելուների մուտքը, որպես կանոն, իրականացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 10-ից 21-ն ընկած ժամանակահատվածում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13.Օրենքով նախատեսված՝ առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց համար ՁՊՎ մուտք գործելու ժամային սահմանափակում չի կարող սահմանվել:

14. ՁՊՎ-ից դուրս գալիս ոստիկանության ծառայողը ստուգում է այցելուի ինքնությունը և այցելուների գրանցման մատյանում նշում այցելուի՝ ՁՊՎ-ից դուրս գալու ժամը և րոպեն:

Ձև

Մ Ա Տ Յ Ա Ն
ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Սկսված է _____
Ավարտված է _____
Էջերի քանակը _____
Պահպանման ժամկետը _____

հ/հ	ՁՊՎ մուտք գործելու ամիսը, ամսաթիվը	այցելուի անունը, ազգանունը	այցելուի պաշտոնը կամ պահվող անձի հետ կապը	վկայականի կամ անձնագրի տվյալները	ՁՊՎ մուտք գործելու ժամը, րոպեն	ՁՊՎ-ից դուրս գալու ժամը, րոպեն